ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2024թ. **N –Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող թվով 85 էլեկտրաշչակները, ընդհանուր, 11,927,917.20 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ խոշորացված համայնքներին բնակչության ազդարարման համակարգը բարելավելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ խոշորացված համայնքների հետ կնքել նվիրաբերության պայմանագրեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » _____ 2024թ. h. _____–Ա որոշման

ՑԱՆԿ
Նվիրաբերվող գույքի

Հ/Հ	Համայնք	Էլեկտրաշչակ միաֆազ			Էլեկտրաշչակ եռաֆազ			Ընդամենը	
		Քանակ /հատ/	Հաշվեկշռային արժեք /միավոր/	Ընդհամենը հաշվեկշռային արժեք	Քանակ /հատ/	Հաշվեկշռային արժեք /միավոր/	Ընդհամենը հաշվեկշռային արժեք	Քանակ /հատ/	Ընդհամենը հաշվեկշռային արժեք
1	Իջևան խոշորացված համայնք	8	146,591.57	1,172,732.56	25	138,401.32	3,460,033.00	33	4,632,765.56
2	Դիլիջան խոշորացված համայնք	3	146,591.57	439,774.71	8	138,401.32	1,107,210.56	11	1,546,985.27
3	Նոյեմբերյան խոշորացված համայնք	4	146,591.57	586,366.28	21	138,401.32	2,906,427.72	25	3,492,794.00
4	Բերդ խոշորացված համայնք	5	146,591.57	732,957.85	11	138,401.32	1,522,414.52	16	2,255,372.37
5	Ընդամենը	20		2,931,831.40	65		8,996,085.80	85	11,927,917.20

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է 2020 թվականի պատերազմի ընթացքում Երևանի քաղաքապետարանը հրատապության կարգով գնել է թվով 100 Ս-40 տիպի էլեկտրաշչակ: Գնված էլեկտրաշչակները իրենց տեխնիկական տվյալներով համապատասխանել են գնման հայտում ներկայացված պահանջներին, սակայն հաշվի չեն առնվել էլեկտրաշչակների աշխատանքային հնարավորությունները քաղաքային պայմաններում, ինչի հետևանքով գնված շչակները չեն ապահովել անհրաժեշտ ձայնածածկույթ:

2024 թվականին Երևանի քաղաքապետարանը գնել և փոխարինել է վերոնշյալ 100 էլեկտրաշչակները նորերով, որնք որ ապահովում են անհրաժեշտ ձայնածածկույթ:

Քանի որ 2020 թվականի գնված էլեկտչաշչակները գտնվում են աշխատունակ վիճակում և կարող են ապահովել բնակչության ազդարարումը գյուղական համայնքներում, առաջարկվում է թվով 85 էլեկտրաշչակները Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ նվիրաբերել Տավուշի մարզին, ինչը հնարավորություն կընձեռվի բարելավել Տավուշի մարզում բնակչության ազդարարման համակարգը, ավելացնել գյուղական համայնքներում բնակչության ազդարարման ձայնածածկույթը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ